14.04.23 - 14.04.23
14:30
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի 501 ընթերցասրահ

Ս.թ. ապրիլի 14-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի 501 ընթերցասրահում տեղի կունենա «Կորպորատիվ վաճառքը՝ որպես արևային բիզնեսի շարժիչ ուժ: Աշխատանքի հնարավորություն ԵՊՀ ուսանողների համար» խորագրով տեղեկատվական հանդիպում «Արփի Սոլար» ընկերության ներկայացուցիչների հետ:

Հանդիպման ընթացքում կխոսվի ընկերության մասին, ինչպես նաև կներկայացվեն ընկերությունում ԵՊՀ ուսանողների և շրջանավարտների կարիերայի ստեղծման հնարավորությունների մասին: Բանախոսներն են կորպորատիվ վաճառքի պատասխանատուներ Սամվել Մարտիրոսյանը, Արման Խաչատրյանը, հատուկ նախագծերի պատասխանատու Արսեն Հարությունյանը:

Հանդիպման ընթացքում կքննարկվեն հետևյալ թեմաները՝

1.«Արևային համակարգերի դերն ու նշանակությունը»,
2.«Արևային բիզնեսի հնարավորություններն ու առանձնահատկությունները»,
3.«Արևային նախագծերի կառավարում, բիզնես բանակցություններ»,
4.«Արևային համակարգերի կորպորատիվ վաճառքի մոտեցումները և տեխնիկաները. հարցուպատասխան»,
5.«Մասնագիտական պրակտիկայի և աշխատանքի հնարավորություն ընկերությունում»:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am